

U.S.C.B.S.P.

891.99

4-88

ՅԵՍ ԸՄԲՈՍՏԱՅԱ

Յես ըմբոստացա... խավարը լացեց
Խիզախ բռունցքիս հարվածների տակ,
Իզուր դավադիր գիրկը նա բացեց,
Իզուր խոստացավ լինել հայտակ...

Նա սիրել էր ինձ այնպես խանդավառ
Յե՛վ բերել աշխարհ դժվար յերկունքով.
Սչերս կապած՝ բայց հոգիս կայտառ
Գզվել էր անվերջ, սնուցել կրծքով:

Նա աղջամուղջոտ մոռյլ գիշերից
Վաչինչ՝ չեր պահել ինձանից անտես,
Կուրացած տենչով միշտ իմ բշերից
Համբույր է քաղել գթառատ մոր պես:

Յես ըմբոստացա՝— լո՛ւյսը սիրեցի
Յե՛վ խելացնոր հարվածներիս տակ
Խավարը բնկա՛վ... յես... յես հաղթեցի
Փա՛ռք ու պատիվ ինձ, կեցցե՛ հաղթանակ...

Ձեզ, վոր ապրում եք խավարի՛ն գերի՛
Յես իմ ուղիով քողել եմ նշան—
Բազում ողակներ իմ շղթաների՛
Վոր փշրվելիս ծաղկեցրին շուշան:

Դե՛հ, դուք ել յեկեք՝ յեկեք լույսի մոտ.
Անեծք— ո՛վ չուզե գատվել խավարից.
Յես այստեղ հասա՛ ծագեց առավոտ.
Շուրջս լո՛ւյս, ազա՛տ... Փառք ու պատիվ բՆձ...

ԱՐԾՎԻ ՍԵՐԸ

Ժեռ փարափին արծիվ նստավ,
Արծիվ նստավ ու յերգեց.
Ձորի միջին աղջիկ տեսավ—
Նշխուն տեսեան գարնվեց:

«Հե՛յ, ջա՛ն աղջիկ, մարա՛լ աղջիկ,
Ափսա՛ս քոչել չգիտես.
Եդ ծմակում լռիկ—մնջիկ
Պիտի քոչնես ծաղկի պես:

Թե քոչելիր— իմ ժայռերին
Քեզ քագուհի կընտրելի,
Քուն գար աչփիդ՝ իմ քեերին—
Անուշ յերգով կորբելի:

Եդ աչփերդ՝ ինձ սև գիշեր,
Ժպիտդ՝ վառ արեգակ,
Անծեր յերկինք քեզ չեր իշխեր
Ու կը լիներ հպատակ:

Յարաք քոչել հե՞չ չգիտես,
Քեզ ո՞վ ծնեց առանց քել.
Յարաք կյանքում հե՞չ ուզած չես
Ողում քոչել միշտ քեքլ...»

Եսպես յերգեց ժեռ փարափին
Հպարտ արծիվն անգյուման.
Թռավ, անցավ սարեն, ձորեն,
Լալով քախտըն աղջկան:

1905

Մ Ի Գ Ի Շ Ե Ր

Յես անհույս, մինչև լույս նստեցի
Լերկ ու մերկ ժայռերի գագաթին,
Քեզ, Մանքաշ, սրտամաշ դիտեցի—
Տեսա քեզ ցավակեզ, սև, մքին:

Մտածկոտ ու ծաղկոտ քո կրծքին
Ծեր Մորվենն դալկադեմ կը շրջեր.
Քո հոգուն՝ միշտ անհուն, ցավագին,
Զով քամին իր մյանին կը սուլեր:

Կարկամած Արագած վերևից,
Ա՛յս, կուլար միալար ու տրտում,
Իր բոլոր հին ու նոր ցավերից
Կոլորեր սև ամպեր գեմիքում:

Յես տեսա աղամա մուրն իջավ,
Լուռ հանգան լուսընկա, ջինջ աստղեր,
Յե՛վ կաք-կաք շաղակաք ցողն իջավ,
Դողացին, տեղացին վառ շողեր:

Յես տեսա ամպի պես վեր յեղան
Անփրկանք տառապանք քո սրտից.
Քեզ ժպտաց լուսաբաց վաղորդյան
Բոլորակ-արեգակ լեռներից:

Պննված, հույս առած դու վստահ.
Գգվեցիր լայն, անծիր յեթերին
Ախ, այդպես, մանկան պես կըժպտա
Շղթայված ու խարված խեղճ գերին:

Յես յերկար վշտահար նստեցի
Լերկ ու մերկ ժայռերի գագաթին.
Քեզ, Մանթաշ, սրտամաշ դիտեցի
Խոկերով, մտփերով՝ սև, մթին...:

1905

ՄԵՆՔ ԵՆ ՄԻԱՆԱՆՔ

Ես փո՛ւշ աշխրփի դարդն ու բալեն
Հերի՛՛ք մեր ուսին իր բեռը շարե .
Ազի արցունքն ել անդադար լալեն
Հերի՛՛ք աչքերիս ցուփերը մարե :

Ես բիրտ որենքին հերիք դուլ-դուրբան
Լինեն մեր գարնան ալ-կանաչ որեր ,
Ու չորս պաստի մեջ մոռցված , անպաշտպան՝
Հերի՛՛ք մեր դիմաց փակվեն բաց դռներ :

Արի՛՛ քուրիկ ջան , ձեռն տանք աշխարհին ,
Մեր ընկերներին թեզ վոտփի հանենք .
Ես սև , դարաբաշ անվայել կյանքին
Մի յեկ , մի ուղիղ գամբա բաց անենք :

Արի՛՛ , քուրիկ ջան , մենք ել միանանք ,
Են մենձ սուրբ կովին եղնինք մասնակից . . .
Հերի՛՛ք շղթայված ու գերի մնանք
Գուման մտփերով , շշմած գրկանփից :

Թող են բախտավոր մեր տղամարդիկ . . .
Շատ չը հայրսեան վոր առաջ անցան ,
Ենոնք առանց մեզ , հավատա՛ , քուրիկ ,
Շատ տեղ չեն հասնի— կընկենն ցիր ու ցան :

Յերթա՛նք քուրի՛կ ջան , անվա՛խ միասին .
Մեր արդար դատին գոհած ամեն բան ,
Են ազատ կյանքի սրբագամ լուսին
Ամենքն ել հավար , կովուզը արժան :

ԴԵԿՏԵՄԲԵՐԻ ՈՐԵՐԻՑ

Յես նայում եյի ապշած, զարմացած...
Ահա ամբոյսը— և՛ ջահել, և՛ ծեք
Բարբիկաղներին իր կուրծքը տված
Կռիվ Ե մզում, խիզալս, անվեհեր...

Ծերուկ բանվորի դողդոջ ձեռքերին
Կարմիր դրոշմ եր հպարտ ծածանվում...
Յե՛վ պայք-յունների ահեղ վորոտին
Ազատ յերգերի թինդը խառնվում:

Յես ուզում եյի հաղթանակն յերգել
Այն ջահելների դեռ կյանք չտեսած,
Վոր այնպես անվախ գիտեյին մեռնել.
Սակայն հուզումնե՛ց ձայնս եր ուղղած...

Մի ինչ վոր հզոր անհայտ գորութ-յուն
Իմ թույլ ծնկները գետնին եր գամում
Ու մի սրբագան շշուկ իմ հոգուն
«Չոքի՛ր, աղսքի՛ր...»,— կամաց փոփսում.

Յե՛վ ծունկ չոքեցի նահատակների
Շարե-շար ընկնող դիերի սուաջ...
Ու հավերժ փակվող պայծառ աչքերի
Կտակը սրտումս... յես անցա հառաջ...

1905

ԱԶԱՏՈՒԹՅԱՆ ՂՈՂԱՆՋՆԵՐԸ

Ղողանջո՛ւմ են զանգակները... զողանջում են
ամեն ոք,
Տառապանքի կսկիծներից յերգեր հյուսում ահավոր—
Տանջված յերկրի ցավոտ կրծքից ըմբոստ կովի
կոչն ուժգին
Տարածվում է ամեն խավում ահեղ քափով ամենքին:

«Դե՛հ, վեր կացե՛ք— ում սրտում դեռ մարդկային
կոչման արժան գեթ մի ոչույլ անմեկին
Թրթռում է տանջանքների բովի մեջ,
Վշտից, ցավից, գերուրբյունից դեռ անշեջ:

Դե՛հ, վեր կացե՛ք— ում սրտում դեռ բռնության
Այրող ձեռքից իդեպները կը մխան—
Ով հոգնել է կորաբամակ՝ ույժի դեմ
Միշտ սողալուց, քմրած հոգով և անգեմ:

Դե՛հ, վեր կացե՛ք ու միացե՛ք անխափան
Ըմբոստ հոգիք՝ զրկանքներից ցիր ու ցան.
Ով վոր լինիք, ուր վոր լինիք՝ միասին
Վողջունելու ազատության սուրբ լույսին...»

Ղողանջո՛ւմ են զանգակները... զողանջում են
ամեն ոք
Տառապանքի կսկիծներից յերգեր հյուսում ահավոր—
Տանջված յերկրի ցավոտ կրծքից ըմբոստ կովի
կոչն ուժգին
Տարածվում է ամեն խավում ահեղ քափով՝ ամենքին:

1906

ԿԸ ՀՅՈՒՍԵՄ ՅԵՐԳԵՐ

Բարձիր ուսերիս քո բեռը— կսկիծ
վազրերն ու նիչեր անհուն տանջանքիդ,
վհատ կասկածդ և սրտիդ անբիծ
Բզուր ցավերը և խաչը կյանքիդ:

Թող կաթիլներով անշման կապանքից,
կաթեն սրտիս մեջ տենչերդ մարած,
Թանձր խավարում, գլխիդ անձկալից
Ըմբոստ խլրտուհան ծիլերը խամբած:

Յես քո սար-բեռան հլու բեռնակիր,
Կը առվվիմ վշտի անհատակ ծովում,
Իսկ դու աշխարհում նորից արծարծիր
Մուրք ազատության իդեալի յերդում...

Յե՛վ յերբ ցավի տեղ այդ ազատության
Տիրե հրճվանքը յերկրի յերեսին
Փշրին շղթաներ, բանտ ու կախազան,
Հնչեն շեփորներ նոր արշալույսին—

Այն ժամ լեռ-բեռդ անհատակ ծովի
Խորունկ խորքերում վշտիս հետ բազած՝
Յես վեր կը բռչեմ, կը փարվիմ հովի,
Այու քեկերին քեթե, քե առած:

Կը հյուսեմ յերգեր ազատ որերի
Անմահ, վագեշունչ, բողբոջ հույսերից,
Կերգեմ նոր հիմնը— հավասարների,
Լույսի ծնունդը՝ բոլրած խավարից:

ՏԱՐ ԻՆՁ, ՄԵԾ ՀՈՍԱՆԲ...

Ինչպե՞ս, ո՞ւր փախչել— վրա աչքիս առաջ
Չգան ու շարվին արյունոտ գոհեր.
Վոր գիշեր-ցերեկ չլսեմ հառաչ՝
Սովի ու վշտի մարմոֆ գուժարեր:
Վոր շուրջս տիրող անարդարության
Ույժն անպատիժ սիրտս վիրավոր՝
Չմաշե անվերջ ցավը հոգեհան
Չիքշաֆաղե մարմինս ամեն որ:
Ինչպե՞ս մոռացվել, չգգալ, չացտասվել,
Դադված աչերիս տալ մի քիչ դադար.
Ուսկից ույժ գտնել— և չկարեկցել
Նմանիս լման, տանջանքին— անհար:
Քայց արժե՞ փախչել— պահվել յերկունքի
Քմբոստ վայրկյանին, տարերքի անեղ,
Տապ բռնկումի մեծ ավետիքի
Չլսել շոհնդ— կովի փառահեղ:
Ընկնումը— կորչի՛... թող լինի այնպես—
Ինչ պիտի լինի... տա՛ր ինձ, մեծ հոսանք—
Գանգս— ջախջախիք. քո փրփրապեղ
Դու ալիքներով՝ կո՛ւլ տուր և իմ կյանք:
Խփիր, շարտի՛ր վշտի ժայռերին
Կարծես— քրքրե՛... թող իմ արյունն էլ,
Արցունքս, հառաչ ձուլվին, խառնվին՝
Թափ տան հոսանքիդ— թող մեռնիմ ջանել...
Տա՛ր ինձ... ցավերի խարույկ բովի մեջ
Թող յեռա հոգիս. էլ մեկիկ-մեկիկ

Զծի՞սս սրտիս մրուրն անշեջ—

Տա՛ր— ուր լափվում եմ՝ իդեալը, մարդիկ :

Յես քա՛փն եմ սիրում լոկ մի հարվածի .

Կռիվը— լինել կամ չլինելու .

Վերքը— մահացու, ցանցն արկածի՝

Ուր անքա՛րքն է— պատասխանատու . . .

1906

Մ Ե Ր Ո Ր Ե Ր Ը

Լույսը բացվեց— դողդոջեցին
Ցող-շողեր,
Վազեց ֆամին դալար դաշտով
Անտարբեր:

Քնհատ ծաղիկն որորվելով
Շնկշնկաց,
Սարի լանջից աղբյուրը ջիճջ
Կկկաց...

Ի՞նչ սլատահեց, ո՞ւմ քաղեցին
Լուռ դաշտում,
Այն ի՞նչ քումբ է, ուր մարդիկ են
Արտասվում...

Հա... այդ նա է— ըմբոստ հոգին
Քաջարի,
Վոր հանդգնեց ել չմնալ
Խեղճ, գերի..

Հա՛, այդ նա է, վոր իր մահով
Վաղածամ
Ազատության դափնին խլեց
Անքառամ...

ԲԱՆՎՈՐԻ ՅԵՐԳԸ

Հառա՛ջ, միշտ հառա՛ջ... Անկցի գերուքյան՝

Կաշկանդոզ շղթան.

Այսոք թե վաղը— մերն է հաղթանակ

Սուրբ ազատության՝:

Ձե՛ վոր ծնունդ եմք ցուրտ նկուղների

Անհաց ու քաղցած,

Տառապանքների, տանջանքի սալին

Կռած ու կոփված...

Ձե՛ վոր անցել եմք կյանքի ճանիւղով

Մե՛նա՛կ, տարազի՛ր—

Ուժեղին՝ հլու, վզերս ծռած,

Վորպես բեռնակիր:

Վայելուչ կյանքի չեղանք մասնակից

Գծուծ ու մրտա՛

Տիրողի համար մանուկ հասակից

Թշվառ մնացորդ...

Բա՛վ է, ընկերներ. պարզեմք կոշտացած

Մեր ջլոտ ձեռքեր—

Հառա՛ջ համարձակ, կյանքի մեծ բեռնում

Փոխվում են դերեր...

ԲԼՐՈՒԼԻՆ

Արի, բլբուլ, մեկ տեղ նստեմ,
Ձեն-ձենի տանք ու յերգեմ.
Ես որվանից դառնամ աղբեր,
Իրար խառնեմ մեր ցավեր:

Անցա՛վ գարուն, աշուն կուգա,
Շատ հեռու չե և ճմեռ,
Լաց, աղբեր ջան, ել վարդ չկա,
Թո՛ւնիք մնաց կիսամեռ:

Յերգեմ, աղբեր, ցա՛վը յերգեմ՝
Դու քո մեռած ալ վարդի,
Յերգեմ, աղբեր, ցա՛վը յերգեմ—
Յես՝ իմ ավեր վաթանի...

Անցավ գարուն, արևոտ գարուն.
Մոտ է աշուն ցուրտ ճմեռ,
Ա՛յս, աղբերս մնաց անտուն,
Քույրս քաղցից կիսամեռ...

Արի՛, բլբուլ, ցավը յերգեմ
Վարդի, ավեր վաթանի,
Արի, աղբեր իրար խառնեմ
Մոմուտ ցավը մեր սրտի...

1906

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՅԵՐԳ

Յես քեզ չգիտեմ, յերբեք չեմ տեսել՝
Գիտեմ, վոր դու կաս— ով էլ վոր լինիս.
Այն ցավն ես կրում, տանջանքն անասել—
վոր տաչորում ե՛ քեզ, ինձ— ամենիս:

Գիտեմ, վոր լված կամ սրտատաչոր
Ծծում ես կյանքի թույնը յիովին,
Անհուն հույսերով նայում ամեն որ
Մի ուրիշ կյանքի ծագող արևին:

Գիտեմ, վոր բանտի մահաճատ գրկում
Ձեռքերիդ շղթա— ազա՛տ մտքերով
Դեպ աի դուրս գալու հույսն ես առկայծում,
Գոռ հորձանքներին դիմում անխռով:

Յես քեզ չեմ տեսել, յերբե՛ք, չգիտեմ,
Սակայն ամեն տեղ, գիտեմ, վոր դու կաս—
Ու ահեղ ժամին, կովում մեծ, վսեմ
Քո, իմ— ամենքի ույծն է անպակաս...

1906

ԱՅՆՏԵՂ ԳՆԱՑԵՔ...

Նվեր յերիտասարդութեան

Այնտե՛ղ— ուր վոր խեղճ գեղջուկն անհաց,
Տգեստ՝ խավարի մեջ ե խարխափում,
Յերաշտից, ցրտից, անսերմ մնացած
Կծղած արտերը արցունքով թրջում.
Այնտե՛ղ— հանգիստի մռայլ խորհերում,
Գործարաններում, ծովի ափերին՝
Ուր վոր բանվորն ե բեռի տակ տնկում՝
Գեթ կուշտ ապրելու տենչանքը դեմքին.
Այնտե՛ղ,— բանտերում՝ ուր շղթայակապ
Հիվանդ որերի հերոսն անահ
Տանջվում ե լռիկ, վշտով անփարատ,
Որերը հաշվում ամարգված մինչ մահ.
Այնտեղ— անտակ, լկտի վորջերի
Թունալի գրկում ապակահուլքան,
Ուր վոր մոռացված խեղճ ընկածների
Կյանքերն ե մաշվում առանց գթութեան.
Այնտե՛ղ— ուր չկա՛ վո՛չ հույս, վո՛չ հավատ,
Վո՛չ սեր-միութեան, վո՛չ մի սփոփանք—
Ուր վոր կեղծիքը, ուստն հուսահատ
Իշխում ե բարուն ու չկա՛ փրկանք—

Այնտե՛ղ գնացե՛ք...

Այնտե՛ղ գնացե՛ք— վեհ սոցիալիզմի
Լույսը տեսնելու սյն մութ խավերում՝
Ուր վոր իդեալը խոյ տանջանքների
Մեղսոտ սեղանին միշտ գոհ ե բերվում.
Այնտե՛ղ գնացե՛ք— նրանց հավասար
Մարդկային կյանքի լուծը տանելու՝
Վարպես «հովիվ քաջ» իր հոտի համար

Պատասխանատու...

ՀԱՆԳՑՐԵՔ ՋԱԼԵՐԸ

Խավա՛ր ե... գիշեր... հեռո՛ւ զենիթում
Մըշուշի միջից դալուկ դեմքերով
Ներհում են անգույն աստղերը տրտում,
Սոսկումով պատած մարմըրում շուտով:
Տընճում ե հողը. շնչով մահահառ
Վիշտն ե գալարվում յերկրի յերեսին,
Ողի թևերին կըսկիծի լացուտ
Մբումնջ ե հնչվում, չկա՛ և լուսին...
Բայց դո՛ւք կամեցաք մրցել յերկնային
Վառ կանթեղների լույսի հետ նսեմ,
Յե՛վ ձեր բազմաթիվ լապտեր-ջահերին
Մի ակնթարթում կյանք տվիք վսեմ: .
Յե՛վ ահա մըռայլ, անմարդ փողոցում
Մեջ կեսգիշերին ձեր պալատներից
Շո՛ղում են լույսեր մթուքյան ծոցում
Շփե՛ղ զարդարված պատուհաններից:
Դուք տո՛ն եք տունում ու զվարճանում
Այնտեղ՝ հոյակապ մտփի, հանմարի,
Վոսկու, արծաթի, վայելիքի գրկում—
Ու բարեմաղթում ամենփին բարի...
Դուք տո՛ն եք տունում ու զվարճանում,
Ուր ամեն քարը ունի պատմութուն
Յուր տակը նըզմած թշվառ գանգերի,
Ուր վոր աղյուսը ծծել ե արյուն
Ու կաթիլները— աղի քրտինքի...
Դուք տո՛ն եք տունում խրոխտ թնդացնում
Ուրա՛խ քրփջով բարձր պատերը,
Վարանց վրայից ֆաղցած, անխնդում
Ընկավ թշվառը, փշրեց վառփերը...

Յե՛վ լապտեր-ջահեր շողում են պայծառ
Ու լույս տարածում ձեր կուշտ դեմքերին՝
Մինչդեռ խիզմերդ կա՛րծք ե ինչպես ժայռ—
Մշտական խավար՝ սրտերիդ բաժին:

Հանգցրե՛՛ք ջահերը...

Յե՛վ թո՛ղ շարեշար ձեր մոխ սեղանի
Շուրջը հավաքվեն ֆաղցած ու սկլոք
Անտեր վորքերը այն թշվառների՝

Վորոնց դուք թողի՛ք առանց հոր ու մոր:

Յե՛վ թող շարեշար գծուժ, վոտաբաց
Շեմքերդ լիզող հավաքվեն մայրեր,
Վոր փոզոց ընկան մուրալու չոր հաց
Ու ձեր պալատում փնտրեն շիրիմներ
Այն բանվորների— ում կյանքի գնով
Յերկինք բարձրացան շքեղ սմերիդ
Բարձր պատերը մարտար ֆանդակով

Վարդակ լինելու փարթամ կյանքերիդ:

Յե՛վ թո՛ղ շարեշար, արևոտ, ուշաֆաղ
Հոշոտված մարդկանց սև ուրվակամներ
Խոնավ փոսերում թողած չոր դագաղ՝
Ձեզ այցի յելեն տեսնով մահաբեր...

Ձեզ հետ սո՛ն տոնեն ու գլարնանան
Այլանդակ կյանքի վայրագ քրքիջով,
Յերգեն գրկանքի յերգը հոգեհան—

Չոր հացի յերգը— մահվան մրմունջով:

Յե՛վ խա՛վարի մեջ խավա՛ր գործերիդ
Պատմեն արգասիք թշվառ անցքերի
Ու հանեն ահեղ դողորդ ու շոհնդ—

Անարդարության սև կապանքներին...

Հանգցրե՛՛ք ջահերը...

ԲԱՆՎՈՐՆԵՐԸ

Այդ մենք ենք գալիս—
Մաշված բանկոններ, յուզուտ ու մրուտ,
Տրորված գտակ, ադուտ մագերով,
Մեծ մասամբ դեղնած, գծուծ և բոկոս,
Յերբեմն դժգույն, յերբեմն անխռով,
Յերբեմն ֆաղցի, լուռ տառապանքի
Սև կննիոների անջինջ կնիֆով,
Յերբեմն ըմբոստ արհամաշանքի
Անգուսպ գայրույթի վրեժի թույլով.
Դեռ վաղ ծերացած հոգեմաշ ցավից,
Լույսի, թարմ ողի տենչանք դեմքերիս
Ու մարդավայել ապրելու հույսից
Դեռ խո՛ր վերքերի կսկիծ սքոտերիս—
Այդ մե՛նք ենք գալիս...
Մե՛նք, բանվորներս՝ տոգած փորերի,
Շերտավոր ցարպի, վոսկու դեզերի—
Անվարճ մշակներ...
Մե՛նք, բանվորներս՝ վշտի, արցունքի,
Կիսափաղց կյանքի, բանտի, աֆսոսի—
Անբաժան ընկեր...
Մե՛նք, բանվորներս՝ ապրելու ահից՝
Կյանքի շուկայում ստոր վաճառքից—
Եժան ծախվածներ...
Ո՛ր, մեծ տգրուկներ, մարդկային կյանքի
Ստեղծագործութեան անարգ խեղդիչներ.
Դո՛ւք՝ փարթամութեան, անառակ տենչի
Քնած խիղներով քմբած խլուրդներ.
Դու՛ք՝ ամոթապարտ գերեզման փորող
Գարշ դահիճներդ սուրբ ազատութեան.

Ձեր նմանների արյունը լափող,
Բողբոջ հույսերի դեմքեր հոգեհան,
Գուցե չե՞նք շոյում մեր տանջված դեմքով
Ձեր նուրբ ջղերը— հոգով ֆաղցածներ,
Դուք՝ կուշտ մարմիններ :

Ձե՞ վար մեր արյան մի—մի կաթիլով,
Ազի ու լեզի թափած ֆրոնքի,
Դառն արցունքների անվերջ հեղեղով,
Մեր բազուկների հուժկու, ժրջան,
Կար թիկունքների, հոգու տագնապով,
Մեր գլխին պատրաստ ամեն մի վայրկյան
Չարաբաստ մահվան անլուր սարսափով

Սնունդ եք առնում,

Ապրում յուզ կապում...

Յե՛կ վաստակներիս չնչին փշրանքներ
Դժգոհ շարսում ֆաղցած ամբոխիս.
Կասես մարդկության մե՛նք յուրք գավակներ—
Դուք վայելչության, անարդար կյանքի
Ընտիր ըմբիշներ...

Չա՛, մե՛նք ե՛նք գալիս—

Դարեվոր վշտի գրկանքի բովից,

Չալածանքների, գարշ ստրկության

Մռռացված խավից—

Կրժժով փշրելու փառքը տիրողի՛ն,—

Գահը բռնության— ստրուկի շղթան,—

Նար ուղի հարթել մեր նմաններին,

Արժանի կոչման— հավասարության՝

Այդպե՛ս ե՛նք գալիս...

ՓԱՌՔ Ի ԲԱՐՁՈՒՆՍ

Փա՛ռք— բազմաչարչար ստրուկ մարդկութեան՝
Տառապանքների, վշտի ազբյուրին:

Կյանքի հեղեղում չարի խորտակման
Ահռելի կովի մարտիրոսներին:

Փա՛ռք— գրկանքների մեծ անապատում
Խիզախ, աննվաճ մագլցողներին,
Քաղցից նվազած՝ հրապարակներում
Հացի վրեժի յերգ յերգողներին:

Փա՛ռք— սրախողխող ու գնդակահար
Քաջ ըմբոստների լուռ շիրիմներին,
Մռայլ հանքերում ընկած շարե-շար,
Մեհած, տրորված սև դիակներին:

Փա՛ռք— թիկունքներին՝ ծոված բեռի տակ,
Կոշտացած ջուր ժիր բազուկներին:

Փառք բանվորության միության սղակ—
Հպարտ փողփողող կարմիր դրոշին:

Փա՛ռք ի բարձունս սուրբ ազատության
Նորածին վոզուն՝ տանջանքում ծնված:
Միշտ փառք և նրան, ով համայնության
Խաչն է փրկանքի ուսերին դրած...

ՍԵՎ ՇՂԹԱՆԵՐ

Այն լույս որերի վառ գարնան համար
Ջեզ՝ սև շղթաներ, իմ կրծքի վրա
Կրում եմ լոկկ, տանջվում անդադար՝
Գիշերը՝ անհուն, ցերեկն՝ անզգա:

Այն լույս որերի— սուրբ ազատութեան
Յերկուսնքի ցավն է իմ հոգին կիզում,
Կեղեքված կյանքիս անվերջ դառնութեան
Միայն հույսերով վերջ եմ յերագում:

Ա՛խ, սև շղթաներ, ամարգ հանգույցներ,
Դուք բիրտ կարգերի և՛ ույժ և՛ տաղանդ—
Իմ կրակ սրտիս իդան անձնվեր
Մուլի բռնութեան դրել եք պատանդ:

Ա՛խ, սե՛վ շղթաներ՞, ժանգոտ ողակներ,
Դեհ զընզընգացե՛ք հիմնը հաղթական՝
Այն լույս որերի հիմնը անվեհեր
Յե՛վ ձեր գարշելի վողբերգը մահվան...

Յ Ե Ր Ջ Ա Ն Ի Կ Ը

Գիշերն իջավ, ցամաքս ընկավ
Մայր-լուսին,
Մի անտարբեր, անհոգ ժպիտ
Յերեսին...
Ամպիկները նրա ցամաքին
Բռնորած
Յետ-յետ փախած^հ կասես լույսից
Մռնորած:
Ու՞ր ե՞ք փախչում, այ տխարներ,
Շող-լույսից...
Շուրջը պատե՛ք, շողեր առե՛ք
Յերեսից...»
Ամպիկները տխուր, սրտում
Լողալով...
Յերգ յերգեցին հեծկլտանքից
Գողալով.
—Աշխարհի մեջ տառապանքի
Մարդկության
Ազի-լեզի արցունքները
Մեզ ծնան.
Մենք վեր յելանք յերկնից գութ-սեր
Հայցելու,
Ժամս գերության կսկիծներին
Վերջ տալու...
Լուսինն ավաղ, տիրոջ առաջ
Բարեխոս
Չուզե լինել- անտարբեր ե,

Յետ ենք փախչում, լույսից խորչում
Մեր ցավով՝

Յերջանիկ է, սիրտը ֆարե՝

Անխռով :

Առավոտ վաղ յերկիր կիջնենք

Անխնդում,

Ծաղիկների նորարողքոջ

Թերթերում,

Կերգենք վիշտը տիեզերքին

Խեղճ մույր .

Միայն նա յե վշտին ընկեր

Ու սովոր . . . »

Ու լողացին ամպիկները

Յերկնում,

Յերկրի վշտով, լուսնից յեռ-յետ

Անլում :

Առաջ լողաց արագ-արագ

Մայր-լուսին՝

Մի անտարբեր, անհոգ ժպիտ

Յերեսին :

1906

ՀԱՌԱՂ ԱՆՎԵՀԵՐ

Հառա՛ջ անվեհեր, հառա՛ջ միաբան,
Արթնացած կյանքի ծագում ե արփին.
Շողերը պայծառ, լուսով անխափան
Հույս ե ներշնչում կովի տագնապին:

Յեվ որըստորե բռնակալ ուժի
Շիրիմն ե փորվում խո՛ր, անդնդային,
Վոնրագործութեան սև մահագուժի
Շեփորն ե հնչում ձայնով յերկնային:

Յեվ որըստորե շարքերը կովող
Անում են ըմբոստ անձնուրացներից,
Անհայտութեան մեջ հոգիք դեգերող
«Վրե՛ժ» են կանչում խոնավ հյուղերից:

Յեվ գիտակցութեան շունչն ամեն սրտում
Մրրիկ ե հանել արդար պահանջի,—
Ով ընկերական կռիվն ե մտնում,
Նա վռչ մի ուժից հետ չի ցահանջի...

Հառա՛ջ անվեհեր, հառաջ մինչև վերջ—
Սուրբ նպատակին միշտ հավատարիմ—
Մահըն անմահ ե արդար կովի մեջ
Յեվ ուխտատեղի՝ մարտիկի շիրիմ...

Տ Ր Տ Ո Ւ Ն Ձ

Իմ մումուռ, միշտ անուր ցավերգով
Ա՛յ, անգին, քո հոգին ձանձրացա՞վ,
Վոր անդարդ ու հանդարտ յեզերժով
Հեռացար քեզ համար, առանց ցավ:

Իսկ յես հեզ, փրփրադեզ ծովի մեջ
Պիտ լողամ ու դողամ մինչև լույս.
Մինչ ծագի նոր այգի լուսանջ
Վառ արփին սեվ ափին արշալույս:

Լուսաշաղ, հուսաշաղ ջինջ շողին
Անհառաչ ընդառաջ յես կերթամ,
Յեվ պսակ ու դրոշակ հստքողին
Կը հյուսեմ յես վսեմ ու փարթամ:

Դու խղճուկ, կամացուկ յետ կուգաս,
Կը ձգտես գողի պես ինձ սիրել.
Իմ ույծից, վրեժից յետ կերթաս՝
Հաղթված և ատված անարգել:

1907

ՅԵՐԿՐԻ ԶԱՅՆԸ

Բարբարոս ուժի անվերջ դավերից
Ավեր է դարձել յերկիրը պարարտ—
Նրա այն կրծքին ամեն խավերից
Անեծն է հնչում կյանքի մեղապարտ:

«Ազգե՛ր միացե՛ք... կուրծքս է խանձվում:
Անտառներ լափող հրդեհից անշեշ.
Արյուն արցունքով հողս է հունցվում
Լացը տարածվում բերրի շերտիս մեջ:

Կարոտ է հոգիս գարնան դալարի,
Ցողազարդ բույսի, յերգին սիրահար,
Խոնջացած դեմքիս էլ չեն գալարվի
Խնկարույր ծաղիկ, թռչուն ողապար:

Զի յեռում կրծքիս անդուլ աշխատանք,
Գուքանի, բահի փայլին եմ կարոտ.
Կարծրացած արյուն դառել է պատանք
Հնչում է վորպես շղթա ձեռ ու վոտ:

Յես ձեզ կյանք տվի ազատ հյուքերից,
Սափայն դուք դառաք ստրուկ, գետնափարշ՝
Իսպառ խոթքացած հարազատ հողից
Մըտաք լծի տակ հակումներից գարշ:

Յես ձեզ ծնեցի ազա՛տ, ինքնիշխան
Հնչեցիք իրար անարգ ձեռներով.
Իմ բարիքներից կոփեցիք շղթան՝
Բռնացաք սրտիս, լեցուն բանտերով::

Իմ բյուր գանձերը ձեզ բողած ավանդ՝
Յես ձեզնից մեկին չեմ գրկել յերբեք.
Բայց դո՛ւք անմիտներ, կրծփիս արգավանդ
Սահմաններ դրիք մտքով դյուրաթեք:

Ազգե՛ր միացե՛ք-իմ ազատ կրծփից
Ջնջեցե՛ք իսպառ դավը մարդասպան—
Արի՛ք ինձ մոտիկ, հեռու անեծփից՝
Ազա՛տ ապրելու՝ յես ձեզ ապաստան...»

Յե՛վ ձայնը յերկրի, վես, խորհրդավոր
Իր ըմբոստ կռչի փողն և հնչում.
Բռնութ՛յան ուժը սարսափած, մուռը
Վերջին գոհերով անդունդ և փախչում.

1907

Յ Ե Ս

Տիեզերքի վերքի յերգն եմ
Զայնս հզոր, մշտական,
Մեռնող դարի յեղերերգն եմ
Յե՛վ վրեժի՝ խո՛ր ական:

Յես վագում եմ կյանքի դաշտով
Ու վողողում՝ սե՛վ հողեր·
Ուր ցավ, կսկիծ տապ յերաշտով
Ծիլ ու ծաղիկ չեն բողեր:

Յես բռչում եմ խավարի մեջ
Հույսի այդ գոռ սահմանում,
Ուր վռնիրն է լսկ միահեծ,
Վկան՝ աստված անվանում:

Ինչպես ուզում-յես ապրում եմ
Տիեզերքում սեփական—
Տիեզերքի վերքի յերգն եմ
Զայնս հզոր, մշտական:

1907

ԳԵՂՋԿՈՒՇՈՒ ՄՈՐՄՈՔԸ

Ինձի յերկինք ասաց սիրիք,
Բերեց ծաղիկն ինձ համբույր.
Հովն ել ասաց.— հե՛չ մի տխրիք
Ու սեր յերգեց ինձ բլբուլ:

Աղբյուրն ասաց — առավոտ վաղ
Արի գիրկս յարիդ տես,
Մշուշն ասաց.— աղջիկ չֆնաղ,
Ահա՛ ֆեզ ֆոլ հարսի պես:

Խոր ծորակն ինձ տեղ տվեց,
Վոր յարիս հետ քազնվեմ.
Պաղ վտակը մրմունջ հանեց,
Վոր մեր ճայնը չլսեն...

Բայց մատնեցին մեզ չարֆերը,
Գյուղը խոսեց մեզ վրա...
Փալջին ասաց.— մեր աստղերը
Իրար հեչ չեն մոտենա...

Ու ափուիս իմաց տվին.
Ա՛յս... ծամերս ֆաշֆեց.
Ատած տղին ինձ հարս արին,
Կարմի՛ր որս խավարեց...

Չե՞ վար յերկինք ասաց.— սիրիք,
Բերեց ծաղիկն ինձ համբույր.
Հովն ել ասաց հե՛չ մի տխրիք
Ու սեր յերգեց ինձ բլբուլ:

2907

Ա Շ ՈՒ Ն

Կանաչ ծառի,
Ժիր ծիծառի
Լոկց գողտրիկ մեղեդին.
Ցեխոտ հողում
Ցուրտն է քաղում
Ըֆնադ գարնան անշունչ դին:
Մերկ անտառին
Աստղը լռին
Դժկամ ցուֆով վայր մայեց,
Սգավոր բուն
Ա՛խ, որն իբուն
Ունայն փառֆին զիլ վայեց:
Բայց իմ հոգին
Թափով ուժգին
Ցեքերի մեջ կվագե
Ամպին անբույր
Տալով համբույր
Ծաղկոտ գարուն կ'երագե:
Ցեվ հուսաշաղ
Մուսաս չֆնադ
Լարն է հյուսում ներբողի
Տեսակ-տեսակ
Դափնից պսակ
Ճակտին ըմբոստ հաղթողի:

1907

Ա Ր Մ Ի Վ Ը

Հսկա ժայռերի լանջին բարձրանիստ
Արծիվը հպարտ՝
Նստած եր հանդարտ՝
Հոգնած թևկերին նա տալով հանգիստ՝
Յերկիրն եր դիտում
Մտախոհ, տրտում:

«Տխուր ե վորքան վարը՝ այն խորում.
Յերկրում բովանդակ
Ծանր լըծի տակ
Հեծում եմ մարդիկ, տնօւմ բանտերում
Անագատ կյանքից,
Ննշված գրկանքից:

Ատում եմ նրանց՝ յես, անբան թռչուն՝
Յեթերի գավակ.
Ազա՛տ յերկնի տակ
Չայն ունիմ հզոր, միչերբս՝ հնչուն.
Յերբե՛ք չեմ սողում
Վորպես գա՛րշ սողուն...

Յերբե՛ք չեմ տեսլ մարդուն բանավոր
Բարձրունքներ շրջած,
Յե՛վ ազա՛տ շնչած
Կապույտ անհունի շունչը փառավոր՝
Ինձ պես սրարշավ,
Թռիչքի ծարավ...

Ի՞նչ կա կյանքի մեջ այնքան ցանկալի,
Յերբ՝ բաց թելերով
Ողբ մեղքելով,
Թռչում ես հեռո՛ւ տեղնով անձկալի
Ազատ դեպի վեր՝
Հպարտ, անվեհեր...»
Ասաց արծիվը... և թվատարած
Սըլացավ ռդում.

Իսկ վարճ՝ անդնդում
Ցուրտ տառապանքից լա՛յն, համատարած,
Խեղճ մարդն եր տնփում
Անիծված կյանքում...

1907

Ա Մ Ե Ն Ք Ի Ն

Ով վոր լինիք,
Ուր վոր լինիք՝
Ձեզ հետ է միշտ իմ հոգին-
Յեվ ամեն տեղ
Յերգս անշեղ
Հետամըտում ձեր կյանքին:
Հե՞ր դուք այդպես,
Սողունի պես
Գալարվում եք խեղճ, տարտա՛մ.
Սեվ ժխորում
Շիրիմ փսրում.
Մարդավայել գոյության:
Հե՞ր դուք այդպես,
Խլուրդի պես
Խուլ վորջերում անտարբեր՝
Կասես յերբեք
Չարթնելու չեք
Մեղկ քմբիրից նիրհաբեր:
Ով վոր լինիք,
Ուր վոր լինիք՝
Ծեր ու ջահել— լծի տակ
Այդ հորտ կյանքին
Տառապանքին
Բաց է անդունդն անհատակ,
Վոր պիտ կուլ տա
Ձեզ անխնա,
Անձայն, անլաց, անառունչ,
Վոր պիտ մարե

Ու պաշարե
Ձեր վշտարեկ նիչն ու շունչ :
Ով վար լինիք,
Ուր վար լինիք՝
Ծեր ու ջահել լծի տակ
Ձեր նորտ կյանքին—
Տառապանքին
Կա մի անմար արեգակ .
Վար կովի մեջ
Պայծառ, անշեջ
Շողն ե մաղում հուսաշագ .
Լռի կովողի
Հարթում ուղի,
Այի հանելով անհասյաղ . . .

1907

ՀԱԿԱՊԱՏԿԵՐՆԵՐ

Այնտեղ՝ յտրախնամք շեն պալատներում,
Վասկի և արծաթ,
Սեղանը առատ.

Այստեղ՝ սեվ կարիք, ճնշում, լափող սավ.
Վորքերի լաց, կոծ,
Քաղցածների անգործ...

Այնտեղ՝ շքեղ փառք, անարժան պատիվ.
Ձեռքեր արյունոտ,
Խեղներ մրուրոտ.

Այստեղ՝ կախողան, ախոր, բանտ. մտրակ,
Կյանքի սեվ գիշեր,
Տրորված լեշեր...

Այնտեղ՝ փափկասուն, սպիտակ ձեռքեր,
Կյանքից հղիացած՝
Փորեր յուղ կապած.

Այստեղ՝ կոր քիկունք, ձեռքեր կոշտացած,
Արտոնյալների
Բիրտ ույծին գերի...

1907

ՇԵՏ ՏԱՐ ՔՈՒ ԽԱԶՆ...

Անծա՛յր տափարակ... գետինը — սառած,
Ջրան կարծր շերտի հյուրընկալ գրկին
Գեմքը ցավագար խնամքով ծածկած՝
Լո՛ւռ մտորում է վիշտըն անմեկին...
Բեռնունջ քամին վազում սանձաքճակ —
Վռոնում է, ոչնում... կամ սյաղ քեփերով
Ծեծկու՛մ է գետնին և յուր անգունակ
Հի՛ն կսկիծներից յերգում է լալով:
Մառախուղը գորշ տճե՛վ փեշերի
Ծալֆերն յերկնֆում համարձակ ձգել,
Ծածկել է չֆնաղ լուսնի, աստղերի
Լուսաբեր ցոլֆն — ազա՛տ-անարգե՛լ...
Յե՛վ ահա հեռվից ինչ վոր մութ գծեր
Սե՛վին են տալիս, ոռնում անհաստատ,
Ճոռնում, յերբում՝ կասես ազոավներ
Քաղցից շվարած, ծարավ կամ շնհատ:
Յե՛վ դաշտավայրի սպիտակ կրծֆին
Վորպես չորացած վերֆերի սպիներ.—
Այն սե՛վ գծերը լուռ և մոլեգին՝
Տազնա՛յ են ազդում, սարսուռ ահաբեր...

Ահա կանգ առան... Խառնվեցին իրար...
Մի խո՛ւլ հարվածից տնֆաց ու դողաց
Ամայի դաշտը... քամին քեփահար
Պինդ փարվեց յերկրին, ֆարացած մնաց:
Յե՛վ մի ոռակալի, խոլ հեկեկանֆի

Ենդդած հեծկտանք տարածվեց դաշտում,
Մի ամոք-ապարտ, մեղսատ պատրանքի
Դիվային քրքիչ շնչաց ողում:
Ու աղեկտուր լալագին վշտի
Հոգոց դուրս թռավ յերկրի յերեսից.
Յեկ սեվին տվեց սեվ հազք-անակի
Գարշեղի փառքին պատրաստված մի ցից...
Ամենքը լուռ են... Մի լուռ պատմություն,
Մարդկային կյանքի մի հսկա հասակ.
Ապրածի՛ վերջը, նորի՛ հայտնություն,
Դարերի ննջման պողոթնումի թափից
Ըմբոստ վիժվածքը տառապանքների,
Անարգ բռնության սուր նիրաններից
Նորածիլ սաղմը ագա՛տ մտքերը,
Հավասարության միակ փրկարար
Վես գիտակցության ծնունդը հսկա—
Որնիրուն փստող, անվերջ հողմահար
Տիրող կարգերի լուծն արնինյա՛
Կանգնեցին անխոս, դեմ առ դեմ այնտեղ—
Այդ վոչնչացման տխուր հանդեսի
Սոսկալի ժամին... այն ժամին ահեղ,
Յերբ սոսկ մարմնացած դա՛րը կը խոսի...

.
Դամին դողալով շոյում է, գգվում
Այն լուռ դեմքերին և իր վշտահար,
Մենակ, անընկեր կյանքից անխնդում
Պատմում է նրանց, լալիս անդադար:
Նա մերթ-փժնելով սեվ ֆարաջայի
Յերկար փեշերն է վախկոտ փողփողում,
Յեկ այն ծեր, ձեռքում բռնած սառ խաչի
Շուրջը զարմացած գալարվում, խաղում:
Նա մերթ այն դաժան դեմքերից ցասկոտ

Թռչում ե հեռու ու սյունին ղիպչում,
Կամ սյունին կապած էյակի քալսծոս
Այրվող մակատը պաղ քեվով շվում:
Թշվա՛ն էյակի... նրան վերցրին
Մի սայթած ումբի վշրանմների մոտ,
Վարտեղ փարվել եր — իր ջահել կյանքին,
Ջախջախված մարմնին — առանց ձեռ ու վառ,
Բռնուքյան մնշող հանույժին հարմար...
Մի անդարձ անդունդ — ըմբռնո՞ւի համար...
Յեվ ահա ինքը՝ մարդկուքյան վորդին,
Տառապանների, անարգ բռնուքյան
Ըմբոստ մարտիկը — իր նմաններին
Փրկելու համար յելավ կախադան:
Ի՞նչ հոգ խավարի սեվ հոգիներին
Վոր նա կես մարդ է... վոր նա տրորված
Արյունաշաղախ մի վիրտոս մարմին,
Սպիների մի ցանց, ձեռք-վառք կորցրած...
Չե՞ վոր քշվառի խիզախ կրծքի տակ
Դեռ յեվս տրոփում են գարկերը վերջին,
Այն ըմբոստ հոգու տեղն անխորտակ,
Հագեցած վրեժի ցուլ կա աչերին:
Չե՞ վոր արնաքամ, չորցած շրթերում
Արհամարհանքի խաղում ե ժպիտ,
Ու մի ստահակ, գոհունակ խնդում
Տիրում այլանդակ մարմնին չոր, վտիտ...
Հա՛, կատարվե՛լ է... պետք է շուտ մեռցնել
Բախտավորներին արհամարհողին.
Պետք է շո՛ւտ խեղդել, արմատից խել
Ըմբոստ խլրտման ծիւերը վերջին...
Յեվ ահա քշվառ դատապարտյալին
Լուռ մտտեմում ե ծերուկ ֆահանգ՝
Ստրուկի շղթան փշրել ուզողին—
Համբուրել տալու հավատի շղթան...
Հե՛տ տար քո խաչը...

Հե՛տ տա՛ր քո խաչը — գործիքն հարմար
Անվերջ կեղծիքի, լպիրջ քառաթյան.
Անխախտ պատմաբան — արված վտոնահար
Ամեն մի տենչի թշվառ մարդկության:

Հե՛տ տա՛ր ազգերի տիտան կապանքի —
Վեհ ճգնումների, սուրբ ողբարտության,
Գիտակից մտքի — ազատ վայելի,
Շողկապ իդեալի — հավասարության,
Յե՛վ սասանական անվերջ ջարդերին,
Անմեղ գոհերի անգութ սպառման՝
Վաղո՛ւց կեղծված ժանգոտ բանալին...

Հե՛տ տա՛ր մոլեռանդ, անմիտ ու անհամ
Կեղեքիչների զենքը — քառաթե՛վ՝
Վոր պաշտվեց յերկա՛ր, յերբ ամեն անգամ
Տնեմում եր մարդը — մտքով կո՛ւյր, անթե՛վ...
Հե՛տ տա՛ր ... նրանից արյուն է ծորում,
Վազում արցունքի, շարավի հեղեղ,
Բյուրավոր, անթիվ գոհերի լեռն—
Ղողանջում մահվան նզովքով ահեղ...
Հե՛տ տա՛ր — տրորված ըմբոստ գանգերի
Տափ-տափ, բարախում— արյունաշաղախ
Թարմ ուղեղներից — հավատողների
Կոփանքի սալը — և խաչդ՝ ավա՛ղ...
Ահա մեր խաչը — սե՛վ սյունն անարգ,
Փրկության համար հանված Գողգոթա,
Ահա և ինքը՝ նոր լույսի զավակ,
Վոր ազատության հարթում է նամբա...

Բաշտունչ քամին վշտից կարկամած
Վռոնում է, ոչ ում յուր պաղ թևերով
Ծեծկում է թմբին, կույտերի սառած
Փշրանքը արնոտ գուրգուրում լալով...

1907

ԿԱԼԱՆԱՎՈՐԻ ՅԵՐԳԸ

Զնգա'... հա, զնգա', գալարվիր, մնշի'ր
վորքան ույժ ունիս.

Սեվացած, ժանգոտ, պաղ աղակներով
Պինդ հպվի'ր մարմնիս,
Քամի'ր արնաքամ իմ ձեռ ու վոտից
վերջին հյուքն իսպառ,
Ծվատի'ր սմբած, չորացած կաշուց
վողջ կեցած պատառ...

Մենակյաց կյանքիս յերգերը տխուր
հեղդի'ր քո հեղձով,
Հիվանդ յերագիս ցուրը խափուսիկ
Մարի'ր անծծով...

Զնգա'... հա, զնգա գիշեր և ցերեկ
Անխափ և անհուն
Մեղսոտ բռնության վորպես արժանի
Միա'կ փրկություն:

Զնգա' շարունակ, վըրդովի'ր բանտիս
Գիշերվան անդորր,
Սեվ ժանգդ ներկիր վառ կարմիր գույնով
Արյունես ծոր-ծոր...

Ահա' նոսրացավ խոլ աղջամուղջի
Անթափանց խավար,
Նորածին արփին կապեց յերկնում
Լուսնդեն կամար...

Դե'հ, զնգա քիչ ե'լ, քո ստոր փառքին
Մոտ է սեվ քրիսա՝

Արթնացած կյանքի վես գիտակցության
վառ լույսն է անաս:

Ղաւ՞մ եւ դբսից ներդաշնակ յերգի
Ազմուկն հաղթական,
Նա ե ցուցարար իմ ընկերներից
Քո դատը մահվան:
Շուտով կպռոթկա այն լույս աշխարհում
Ահռելի մի դեպք՝
Յեւ դու, ով շղթա, կմնաս անտեր,
Մոռացված անպետք...
Կամ քե դարբնոց կերթաս կույտերով
Կուռ սալի վրա՝
Կը փշրեն հոգիդ և դու կդառնաս՝
Գործիք առորյա...

Դե, զնգա ուժեղ, վորքան ույժ ունիս
Պինդ հովիր մարմնիս—
Վերջին ցնցումիդ տագնապի քափից
Թող հրնվի՝ հոգիս...

1907

ՎԱՅ ՁԵՁ, ՎԱԽԿՈՏՆԵՐ

Մեր դժբախտ կյանքին անհույս, անարեւ
Ձկարծե՛ք թե շուտ, կամ թե հրաշքով
Յանկալի այգի կծագի արեւ
Նոր հարիզոնից ջինջ, ազատ ցուֆով:

Մեր վիրտտ սրտի վերքերը խորունկ
Դեռ կը մոմոան — չեն ծածկվի հանկարծ.
Սեվ որում խանձված ծառ, ծաղիկ ու տունկ
Ձեն ծաղկի հողից արշունով ներկված:

Մեր հիվանդ քնից վառ յերագների
Յնորքը շքեղ անթիվ, անպտուղ
Կցնդվին անհետք, սոսկման որելի
Կը մնա զրկանք, քաղց ու ցուրտ նկուղ:

Դարերով կոփված կուռ շղթաներին
Լուկ մի հարված չի փորի անդունդ,
Տանջանքի բովում մշտակյաց գերին
Մի պատառ հացով չի առնի սնունդ:

Ուժ է հարկավոր— անհողդողդ հավատ
Կոր թիկունքներից տիտան պատնեշներ...
Հորձանքն է գալիս փորձանքի տարափ
Ահա կթափվի—վա՛յ ձեզ վախկոտներ...

1907

ԳՈՒԹԱՆԻ ՅԵՐԳԸ

Հե՛յ... վեր կա՛ց գեղջուկ. դո՛ւք, ընկեր-յեզմեր՝
Գնա՛նք շուտով արտ.

Հուժկու յեռանդով սև կուրծքը նեղենք՝

Մայր հողի պարարտ:

Շրջենք յետ-առաջ, յերկա՛ր գծերով

Փորենք ակունքեր՝

Սուրբ աշխատանքի վսրպես ժրաջան,

Անվախ հերոսներ...

Արե՛վը ահա՛ փայլում է վերից

Գրառատ սիրով,

Անո՛ւշ գուրշին շղարշի նման

Ճոճում դաշտերով:

Բացված բներից գործի յե դիմում

Անհամար մրջյուն,

Մայր-հողն է ծնում, գետը տարածում

Թովիչ կարկաչյուն:

Հե՛յ... վեր կա՛ց յեզմուկ, հերի՛ք մրափես.

Վեր կա՛ց սերմնացան՝

Գնանք շուտով արտ, շաղ տու՛ր հատիկներ

Այնտեղ ցիրուցան:

Կարոտ եմ ինչպե՛ս հողի գով շերտում

Դեմքս պարտկել՝

Վարտեղ գորշ վարդեր անհոգ գայարված

Գիտեն միշտ պառկել.

Կուզեմ յես հյուր-քո ծիլերի ցանցեր

Համբուրել սրտանց,

Հողի շշուկից արբել, մոռացվել

Խորհում անթափանց:

**Հե՛յ... վեր կա՛ց, գեղջուկ, վեր կացե՛ք յեզմեր,
Մի՛թե չե՛ք գգում—**

Արտերը վազո՛ւց սերմի կարասից

Լալիս եմ, սգում:

**Այս ի՞նչ եմ տեսնում... գեղջուկն է գալիս
Գլխակոր, տրտում.**

Կիսամերկ, գծուծ թախծուտ հայացֆով

Ինչ վոր փնթփնթում:

**Թշվա՛ռ, գարշ միջատ, գե՛թ կուշտ լինելու
Չունեցար հնար...**

**Ըստրուկ՝ կյանքի մեջ, արդար վաճառակից՝
Հեռո՛ւ, անհրնար...**

ՄԱՆ Ե ԳԵՐԱԶԱՆՑ

Գեթ հեղաշրջման այս ժամին վսեմ
Հիվանդ դարերի փառքը թողնեյիք.
Յեվ անհաշտ որից դալուկ ու նսեմ,
Ամենքի կողքին քիչ ույծը առնեյիք:

Ի՞նչ շահ դարերով հյուծվել անըզգա՝
Ունայն ցնորքի հյուսած վոստայնում.
Բնական գաման՝ ձևանալ հսկա
Յեվ մուրալ այնտեղ, ուր չեն ստանում:

Մանկան միամիտ հավատով արբած,
Իրական կյանքում անփորձ, անգիտակ,
Ինչ շահ դավերին դիմել գրկաբաց —
Կուրորեն մտնել ծանր լծի տակ:

Դե՛հ, յեկեք ապրեմք նոր կյանքով, նորից
Քանդեմք կապումքներ, փախչեմք ժխորից.
Ստրուկ ապրելուց մահն է գերազանց.
Թո՛ղ արեվ փայլի լուկ ազատ մարդկանց.

Մ Ի՝ Լ Ա Ր

Դու միայար մի՛ լար, անգին,
Այս կույր
Անբույր
Գիշերով.
Վերբիդ — յերգիդ թող իմ հոգին
Ծածկե
Վսակե
Հուշերով:

Յես քեզ մի հեզ, գրոտ մոր պես
Մի ջինջ
Անջինջ
Պատգամ տամ՝
Ցավից — դավից մնաս անտես
Յե՛վ միշտ
Անվիշտ
Ու փարթամ...
Քեզ ինչ թե ինձ բաժին մնա
Քո լեռ
Ու բեր
Տառապանք —
Յես իմ դժխեմ կյանքում անտես—
Յե՛վ յերգ,
Յե՛վ Վերբ,
Յե՛վ փրկանք...

ՎՈՉ ՎԱԽ, ՎՈՉ ԼՔՈՒՄ

Վո՛չ վախ, վո՛չ լքում.
Թող ըմբոստ հոգում
Լոկ արդար վազվա հավատը կայուն
Ապրի, հուրհուրա,
Թող ժիր բազկի հետ սերն ել գգայուն
Վայելիք չմուրա:

Ջրկվածի համար
Մեր ուղին հարմար.
Բողոքն ու կռիվը՝ հարատևի, ցասկոս.
Մենք մարդուն վայել
Մի կյանք կերտելու ընդմիջտ պահանջկոս
Ջանք չենք խնայել...

Մեր սիրտը անմահ
Անհաղթ կմնա.
Կդառնա բաղձանք՝ լինե՛լ մեզ մտան—
Չարին թշմամի,
Ձգտել որ առաջ դնել գերեզման
Լուծը դրամի:

Ի՛նչ բախտ ունենալ
Ուղի, և գնալ
Հուսով պսակված, անշեղ, անսայթաք.
Ու միշտ անվհատ
Ահի մեջ պահել արևոտ գահ ու թագ
Խաչ, կրոն, հավատ:

ՎՈՂՁՈՒՅՆ ՔԵԶ

Հոգուս բոլո՛ր գանգակներն եմ դողանջում—
Արժանացա ազատ կյանքի վողջունին.
Ել վոչ մի ցավ ըմբոստ սիրոս չի տանջում
Մարդիկ — ընկեր, իրարու դեմ վոխ չունին:

Հինը մեռավ. կեցցե հինը մեղսալի,
Վոր ընդվզեց մտքերն ստրուկ դարերով.
Թոք-ափեցիւնք պատրանքը հին սխալի,
Հաշտ արթնացանք այս նոր այգի արելով:

Վո՛րքան ազնիվ տենչեր իջան մեր առաջ—
Ազատ կյանքը արդար գործ ե պահանջում.
Ու յես հպարտ ծանոթ քախտից թե՛վ առած
Հոգուս բոլո՛ր գանգակներն եմ դողանջում:

Ո՛ր, վողջույն քեզ, բյուր վողջույններ գոհության
Ազատություն կյանքի, խզնի և խոսքի.
Գահավիժվեց քեզ վանատոզ նեմզ Հուդան՝
Արյունոտ եմ նրա որերն ու վոսկին:

1917

ԴՈՐԲՆԻ ՅԵՐԳԸ

Դեհ, արագ նոճա դու, իմ ընկեր, իմ մուրմ՝
Շիկացած յերկաթին հարվածիր անշեղ.
Այս որից իմ գարծն ե շինարար ու լուրջ.
Իմ ջանքը՝ լոկ սուրբ պարտք, յերկաթը՝ սաշեղ-
Բանելուս ժամերը լա՛վ հաշված— թեթև՝
Չեմ հոգնի մկաններ անագո՛ւտ և գուր,
Զի ծովի թիկունքս, միտք, հոգի ու թեվ,
Զի քամվի ուժս խաղառ, քրտինքս՝ քան ջուր՝

Կռենք, կոփենք—

Հինը փոխենք.

Յերկաթը սաք

Դողա սալին,

Ու վռտնատակ.

Վո՛ղջ մեղսալին.

Կռենք, կոփենք

Հինը փոխենք—

Յերկաթը շեկ

Տա հացի գին,

Մտքերիս դեկ—

Իմաստ կյանքին:

Փ Ա Ռ Ք Մ Ե Չ

Նայում եմ յես հետ՝ մաշվել ե շարքը
Անսանձ վռնիքի.

Ել հացի ահը սրտերի վրա

Խորշում չի բերի—

Զի գերի բանուկ ձեռքերի ջանքը

Դրամի ուժին.

Վոր հնից ժառանգ խոցերն արմատով

Մեր ձեռքով բուժվին:

Զկա՛ արտոնյալ սեփականության

Ճնշում մեզ վրա.

Ով վատնում կորով ու լարում միան՝

Այդ հացն ե նրա.

Նետել են փողոց գահն ել, բազն ել,

Կրո՞նի շղթան,

Վոր լո՛ւյսը մնա մարդկային գործի

Փրկարար խթան:

Ու նայում եմ հետ. այդ մենք ճեղքեցինք

Սոսկումի ուղին.

Ընկանք բարձրացանք շշմած դավերից.

Մեզ մեռա՛կ բռնին...

Մե՞նք տապալեցինք դարերի կերտած

Կորոզը չարի.

Մեզ ո՞վ եր տվել մարտիրոսելու

Հրդեհն հանճարի:

Ո՛ր, փա՛ռք մեզ, հավերժ, անմեռ փա՛ռք, որհնենք.

Որհենեմք ամեն որ .

Նոր կյանք, նոր որեր, նոր միտք համապագ
սինդ ու ամանոր...

Նայում եմ առաջ՝ հոգսի, կարիքի

Տիտան պիրամիդ .

Սակայն, մեմք գիտեմք ծաղրել լոստիսին

Մեղկ ու միամիտ...

1921

Ա Ս Տ Ղ Ա Կ Ի Ր

Հանի՛ր պատյանից
Դու սուրդ անպարտ
Ու անահ կանգնի՛ր
Գալիֆի դիմաց,
Կարմի՛ր աստղակիր...
Կարմիր աստղակի՛ր,
Փառֆով ե նախշած քո անցած ուղին,
Կարմիր կովի մեջ
Զունի՛ս մրցակից
Ու չես՝ ունենա...

Քո զարկից փախան
Ազնիվ գողերի
Լեզեռնները մուր ուղիներով,
Ահարեկ, շվար,
Յեվ արժեքավոր
Ծանրոցներ ուսած,
Քաղցին անգիտակ,
Անհայտ վայրերում
Նոթի պատկելու
Անտուն շան մտան...

Քո զարկից փախան
վարձկան ու ծախված
Թուլամորթները քալանի ծարավ,
Վոր տիրողների շահերին գերի—
Նենգ ու չարանյութ
Արքաներին հաշտ—
Ջանացին խել
Մեր խորհուրդների տիրապետուբյան

Փառքն ամբակուտ ,
Նորից կերտելու
Գահի , շղթայի , մտրակի , բանտի ,
Վանքի բռնութեան
Գարշելի ուժը— դարերի ավանդ...

Բո գարկից փախան
Գավակահանները ,
Գահիններն արևոտ ,
Վոր պիղծ ձեռներով
Խեղդում էյին մեզ—
Մեր տենչերն բմբուստ ,
Ու ծմակներում
Միշտ հորդոր կարդում հավասարութեան . .


Յե՛վ ահա նորից
Զբացող տարրի , շահերով **ձուլված**
Սևհաշտ շարքերում
Պատուհասների
Շաղվում են ցանկեր
Ընդդէմ մեր յերկրի...
Զոյս տարվա հսկում՝
Գողեսկոյվեցին կեղեքիչները
Ամեն տեսակի ,
Կրոնի , ազգի...
Ի՞նչ տարվա հանգիստ
Ու յետ են դառնում
Բո ծեծած մարդիկ...
Խակ ձու , աստղակիր ,
Հանիր պատյանից
Բո սուրբ անպարտ
Ու անահ կանգնիր
Գալիֆի դիմաց...

1922

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

	Եջ
1. Յերկու խոսք	3
2. Շուշանիկ Կուրղինյան	5
3. Յես ըմբոստացա	11
4. Արծվի սերը	12
5. Մի գիշեր	13
6. Մենք եւ միտնանք	15
7. Դեկտեմբերի սրերից	16
8. Ազատութեան զոդանջները	17
9. Կը հյուսեմ յերգեր	18
10. Տար ինձ, մեծ հոսանք	19
11. Մեր սրերը	21
12. Բանվորի յերգը	22
13. Բլբուլին	23
14. Միջազգային յերգ	24
✓ 15. Այնտեղ գնացեք	25
16. Հանդիսեր քահանայեր	26
17. Բանվորները	28
18. Փոսք ի բարձունս	30
19. Սև չղթաներ	31
20. Յերջանիկը	32
21. Հասա՛ջ անվեհեր	34
22. Տրտունջ	35
23. Կեցցեն շարքերը	36
24. Թող մեռնենք պատվով	37
25. Յերկրի ձայնը	38
26. Յես	40
27. Գեղջիկուհու մորմուքը	41
28. Աչուսն	42
29. Արծիվը	43
30. Ամենքին	45
31. Հակապատկերներ	47

	Եջ
32. Հե՛տ տար քո խաչը	48
33. Կալանավորի յերգը	52
34. Վա՛յ ձեզ, վախկոտներ	54
35. Գոթանի յերգը	55
36. Խա՛նն և դերագանց	57
37. Մի՛ ըսր	58
38. Վսչ վախ, վսչ էքում	59
39. Վսղջույն քեզ	60
40. Դարբնի յերգը	61
41. Փա՛ռք մեզ	62
42. Աստղակիր	64



Տեխ. խմբագիր՝ Ան. Գասպարյան
Սրբազրիչներ՝ Հ. Մանուկյան և Վ. Ավագյան

Գրավիտի լիտոյր՝ Վ—1140. Հրատ. №5073.
Պատվեր 835. Տիրաժ 3000
Թուղթ 64X92. Տպագր. 4 մամ.
Մեկ մամ. 36480 նիշ.
Հանձնված և արտադրության 9 սեպտեմբերի
1939 թ.
Ստորագրված և տպագրության համար 19
նոյեմբ. 1939 թ.
Պետհրատի I տպարան, Յերեվան, Լենինի 65